# ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԸ ՀՐԹԻՌԱԿՈԾՈՒԵՑ

Սեպտեմբերի 25ին Ստեփանակերտը հրթիռակոծութեան ենթարկուեց: Շրջակայ բարձունքներից Ստեփանակերտի վրայ արձակուել են 5 կամ 6 «Ալազան» տիպի հրթիռներ: Երեք հրթիռ պայթել է քաղաքի տարբեր թաղամասերում:

Մի հրթիռ ընկել է մանկական հիւանդանոցի բակում գտնուող ինքնաշարժի վրայ եւ հրդեհել այն: Միւս հրթիռները չեն պայթել: Հրթիռակոծումից անմիջապէս յետոյ մի ադրբեջանական ուղղաթիռ է պտտուել Ստեփանակերտի վրայ, հետախուզական նպատակով:

Զոհեր եւ վիրաւորներ չկան:

Սա ազերիների կողմից Ստեփանակերտի առաջին հրթիռակոծումն էր: